ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 1167-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 1-ին կետի 15-րդ ենթակետով նախատեսված չափորոշիչ)

2017 թվականին Վայոց ձորի մարզի կառավարման մարմինների և բնակչության պատրաստումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում

Գնահատման չափորոշիչներ	Կատարված աշխատանքները՝ ըստ ենթաչափորոշիչների
1. Բնակչության ազդարարման համակարգերի նախապատրաստում և գործունեության աշխատանքների կազմակերպում	Բնակչության ազդարարման համակարգը՝ էլեկտրական շչակների տեսքով, ներդրված է մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից 19-ում:
2.Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության թեմաներով հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական և օբյեկտային ուսումնավարժությունների կազմակերպում և անցկացում	ՀՀ Վայոց ձորի մարզում 2017 թվականին «Մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման տարեկան հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումներից կատարվել են հետևյալ միջոցառումները. - ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ Վայոց ձորի մարզի 35 հանրակրթական դպրոցներում անցկացվել են դասախոսություններ, իսկ մարզի 10 դպրոցներում <<<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում պատսպարման իրականացումը>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ: - ՀՀ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ մարզի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում անցկացվել են <<<Հրդեհի դեպքում հրդեհաշիջման և տարահանման միջոցառումների իրականացումը>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, իսկ 10 ուսումնական հաստատություններում <<<<< ԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները>> թեմայով դասախոսություններ: - ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում գործող թվով 7 կազմակերպություններում անցկացվել են տարբեր թեմաներով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ: - Մեթոդական օգնություն և մասնակցություն է

	ցուցաբերվել մարզի համայնքների կողմից արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացված թվով 20 շտաբային ուսումնավարժությունների նախապատրաստմանը և անցկացմանը: - Եռամսյակը մեկ անգամ մարզային փրկարարական վարչությունում ՀՀ Վայոց ձորի ՔՊ մարզային ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվել է հրամանատարական պատրաստության պարապմունք: - Ջերմուկ քաղաքի <<Օլիմպիա>>, <<Արմենիա>> և <<Արարատ մոր և մանկան>> առողջարաններում անցկացվել են <<Ուժեղ երկրաշարժի դեպքում հանգստացողների պաշտպանության կազմակերպում>> թեմայով օբյեկտային վարժանքներ: - 2017 թվականի հունիսի 7-ին ՀՀ Վայոց ձորի մարզում անցկացվել է <<ՔՊ միջոցառումների իրականացումը մարզի ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ>> թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն: - 2017 թվականի հունիսի 7-ին Վայոց ձորի մարզի Արենի համայնքում անցկացվել է «ՀՀ Վայոց ձորի մարզի տարահանման մարմինների ծավալում (տարահանման (ընդունման) հավաքակայաններ, ժամանակավոր տեղակայման և երկարատև բնակության կետեր) և բնակչության պատսպարման կազմակերպում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն: - 2017 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցում անցկացվել է «Ուժեղ երկրաշարժի հետևանքով կիսաքանդ շենքում որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն: - 2017 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում անցկացվել է <<Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը սողանքի դեպքում>> թեմայով շտաբային ուսումնավարժություն, որին մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզպետը, մարզպետի տեղակալը, ԱԻ և տարահանման հանձնաժողովների անդամները, ՄՓՎ անձնակազմը, Չիվա և Ռինդ համայնքների ղեկավարները:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.01.2018թ.